

ԻՐԱՅԻՆ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔՍԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ

Rev. Père G. Kalémkarian Mechitaristengasse
N 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Կենտրոնայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մեկ
օրով) Տա. և կաճ 1 և 2 ֆր. և 3 ֆր.
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համայն դրամ եռայն դրկի հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՅԻՆ» ԻՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ա. (Պոլիարիա)
Редакция на ВѢСТНИКЪ Редакция du journal
"Правуны" "L'Avouk"
ВАРНА (България) V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
և չեն ընդունուիր եւ յարմար դասուած
ները միայն կը հրատարակուին աւ-
տոյնովին կամ մասամբ:
Դատարանի սրբ 20 սանթիմ. երե-
ւել անկի անգամներու համար 20 օ/0
գնէ կը շինի:

ՈՒՍԱՃՈՒՔԻ ԴԵՊԵՐ

Ռուսները վերջին անգամը
մեր ազգային կեանքի մէջ անօրի-
նակ երեւոյթ մը չեն կապմեր,
բայց ուշագրաւ եղան իրենց ուժ-
գնութեամբ և այն ծայրայեղ մի-
ջոցներով որոնց դիմել հարկաւոր
գտանք թաղ. խորհուրդը:

«Թիշուր-չիշուր» ի խնդիրը ար-
տասանների տառնակ քաղաքնե-
րուն մէջ յուզուեցաւ, սակայն
Ռուսները զատ ոչ մէկ տեղ մը
ստիկանութիւնը հրաւիրուեցաւ
խուզարկել եկեղեցի մանդները,
ձեռնարկել և բռնատակել չիշուրի
պողատները: Այս կէտն է որ բա-
ցառիկ հանգամանք մը կուտայ
գործին և խորհրդածութեան մաս-
նաւոր նիւթ կը մատակարարէ այդ
դէպքին մօտէն կամ հեռուէն մաս-
նակցութիւն չունեցող ամենէն ան-
կողմնակալ մարդուն որ ամենա-

պզտիկ նախանձախնդրութիւն մը
կըզգայ մեր իրաւունքներուն և ա-
ռանձնաշնորհումներուն համար մեր
զուտ կրօնական-ազգային ներքին
գործերուն չըջանակին մէջ:

Անցողակի ըսենք թէ շնորհա-
կալութիւն կը պարտինք պուլկար
ստիկանութեան որ իրեն միակ
ուղեցոյց ունենալով երկրին ազատ
օրէնքները, չատ սահմանափակ
չափ մը դրաւ իր միջամտութեան
և այսպէս մեր եկեղեցական իրա-
ւասութիւնը յարգեց մեզմէ աւելի
որ հրաւիրեցինք զինքը մեր ինք-
նագլուխ եկեղեցիին արարողու-
թեան կատարման մէջ մեզի հրա-
մայել:

Արդարեւ Պատրիարքի յիշատա-
կութիւնը զուտ եկեղեցական ա-
րարողութեան գործ մըն է որուն
մէջ մեր ժողովրդական եկեղեցիին
զաւակներուն ձայնը միայն կրնայ
վճել: Ի՞նչ բան ուրեմն մեզի ըս-
տիպեց ստիկանութեան դիմել:

Թաղ. խորհուրդի դիմումը կրի-
նար արդարանալ թերեւս եթէ ժո-

ղովուրդը — տեղացի թէ դրսեցի,
այդ խնդիրն է — երկու կուսակցու-
թեան բաժնուած, անոնցմէ մէկը
ուզէր անպայման յիշել տալ իսկ
միւսը չիշել տալ և ծեծ ու փետի
կամ աւելի ծանր պատահականու-
թեան մը համար միայն 2-3 սա-
տիկաններ պատրաստ սպասէին աչ-
քի զարնելու տեղ մը:

Բայց գործը այդպէս չէ: Ռուս
նուրէն եկած տեղեկութիւններ կը
ցուցնեն թէ Օրմանեանի յիշատա-
կութեան փափաքողներ շատ փո-
քըր են իրենց թիւով, այս հաս-
տատիւ կը թուի «Իրաւունք» ի
նախորդ թիւով հրատարակուած
թղթակցութիւն մը ուրիշ իմա-
ցանք թէ թաղ. խորհուրդը հա-
ւանած է, ժողովրդային քանի մը
պատգամաւորներու ստիկան վրայ,
անգամ մըն ալ Պատրիարքը յիշել
տալ և անկէ ետքը դադարեցնել ա-
նոր յիշատակութիւնը: Եթէ թաղ.
խորհուրդէն դուրս գորաւոր կու-
սակցութիւն մը կենար յիշատա-
կութիւնը անպայման պահանջող,
խորհուրդը չպիտի կրնար այդ
խոստումը զիւրութեամբ տալ:

Գիտենք նաեւ թէ ստիկանու-
թիւնը, անշուշտ իրեն տրուած
չափազանցեալ տեղեկութիւններու
վրայ, բազմաթիւ գործակատար-
ներով գրեթէ կը պաշարէ եկեղե-
ցին, ինչ որ ժողովրդի վայրոյ-
թը միայն զրգռելու կը ծառայէ
թաղ. խորհուրդին դէմ և անխու-
սափելի կը դարձնէ հակառակորդ-
ներու ընդհարումը եկեղեցիին մէջ:

Այս ամենէն զատ, եթէ երբեք
երկու սուրի այսինքն երկու հա-
կառակորդ կուսակցութեան մէջ
տեղ շուարած մնացած ըլլար թաղ.
խորհուրդը, ինչպէս ոմանք կու-
զեն առարկել, այն ատեն լուա-
գոյն էր փոխանակ ստիկանական
ուժի: Ուրիշ անողոր, բայց խա-
ղաղիկ ու համոզուելի միջոցի մը
դիմել, այն է ժողովրդի քուէին,
որուն առջեւ ամեն ինչ պէտք է
խոնարհի: Եթէ ուրիշ միջոց չը
կար, քուէարկութեամբ մը թող
որոշուէր խնդիրը ան ատեն ոչ
ծեծ կըլլար ոչ խռովութիւն:

Յայտնի է սակայն թէ ինք թաղ-
խորհուրդն էր որ իր համեմատա-
պէս փոքրաթիւ համախոհներով

կուզէր Օրմանեանի յիշատակու-
թիւնը հակառակ ժողովրդի ա-
հագին մեծամասնութեան, զոր
չախախտելու համար դիմեց ստի-
կանութեան:

Աս պարզ կամայականութիւն
էր, որուն դէմ մընտաւալ Ռուս-
նուրէ տեղացի և գաղթական ե-
րիտասարդութիւնը, թաղ. խոր-
հուրդը ստիկանեցաւ գիշանիլ,
Օրմանեանի անունը անգամ մըն
ալ յիշել տալու պայմանաւ: Պայ-
մանը թէեւ բաւական զարմանալի
երեւայ, գործին այս ելքը պէտք
է զոհացուցիչ նկատել, որովհետեւ
անպատուաբեր և վնասակար երկ-
պառակութիւն մը վերջացաւ և իր
հետ պաշտօնական մարմնոյ մը
քմահաճոյքը:

Ռուսները դէպքին վախճանը
ոչ միայն անտեղի, այլ և ուրիշ
քաղաքներու մեր պաշտօնական
մարմիններուն շատ յարմար է յի-
շեցնելու թէ իրենց տարրական մէկ
պարտականութիւնն է, իբրեւ ներ-
կայացուցիչ հայ ժողովրդին, ամեն
պարագայի մէջ յարգել անոր մե-
ծամասնութեան կամքը:

Վ. Ջ. Ա. Մ.

ՎԱՃԱՌԱՎԱՆՆԵՐՈՒՆ

Հնչակեան կուսակցութիւնը իր օր-
կանին մէջ հետեւեալ սպառնալից յայ-
տարարութիւնը հրատարակած է.

Կ. Պոլսէն հաղորդեցին թէ Օր-
մանեան պատրիարքը մտադիր է
Կ. Պոլսոյ և Պոլիարիոյ թրքա-
հպատակ հայ վաճառականները
ստիկանի որ հանրագիր մը ստո-
րագրելով վաւերացնեն պատրիար-
քին հակահայկական քաղաքակա-
նութիւնը: Օրմանեան ոչ յուսալ
այս միջոցով ամբողջել իր դիրքը
որ լա հէ զարկած հեռագրով
ուժգնապէս խախտած է:

Մենք չենք ուզեր ու է կերպով
կուսիլ հայ վաճառականներուն
դէմ յերափոխական տեսակետով,
Չգոյժ եղած ենք որ պատրուակաւ
մը չը վտանգուին օսմանեան իշ-
խանութեան առջեւ: Գիտենք թէ
զոհողութիւն ընելու ոչ տրամա-
դիր են, ոչ ալ ընդունակ, իրենք
ալ օակայն թշնամիին հետ պէտք
չէ միաբանին: Իրենց ապահովու-
թիւնը չէզոքութեան մէջ կը գտ-
նեն: Այն օրը որ մոռնալով իրենց

այս դիրքը, յանկարծ գործունեայ
աշակցութիւն կը նուիրեն հայկա-
կան դատին թշնամիներուն, այլ
եւ չեն կարող խնդրել որ իրենք
հանգիստ թողուին: Իրենք զենք
մը ունին որով հայկական դատին
վնաս հասցնելու կը նկրտին: մենք
ալ զենք մը ունինք:

Գիտենք թէ պիտի պատասխա-
նեն: «Ի՞նչ կրնանք ընել, բռնու-
թեան առջեւ տեղի կուտանք»:
Այդ արդարացումը ընդունելի չէ:
Եթէ բռնադատութեան առջեւ
համոզում, խիղճ, ազգային շահ
կը մոռնան, ու թշնամի բանակը
կ'անցնին, իրաւունք կուտան մե-
զի իրենց յայտարարելու թէ՛ ա-
ւելի արդար բռնաբարութիւն մը
կրնայ զիրենք ստիկանի որ ոչ հա-
մոզումնին զոհեն, ոչ խիղճներնին,
ոչ ալ դաւադրեն ազգին դէմ:
Փորձանքը Օրմանեանն է որ իրենց
գլուխը կը բերէ. ապահովութիւն-
նին անկէ թող փնտռեն:

Երբ 1894ի զարնան Կ. Պոլսոյ
բոլոր եկեղեցիները հրահանգ խր-
կեցինք պատարագի մէջ չիշատա-
կել ուխտադրուած պատրիարքը,
թիւրք ստիկանութիւնը բռնակե-
ցաւ: Քահանաները հրաւիրուե-
ցան ստիկանատունները և հրա-
ման ստացան չհպատակել մեր հը-
րահանգներուն, այլ իբր հաւա-
տարիմ հպատակներ սուլթանին,
յիշատակել պատրիարքին անունը,
եթէ չեն ուզեր բանտ երթալ,
կամ աքսոր խրկուիլ:

Քահանաները պատասխանեցին.
— Պատեցէք մեզի ինչպէս որ
կ'ուզէք. ուղիքանին բանտերուն
դռները օր մը կրնան բացուիլ, և
աքսորէն վերադարձը միշտ յու-
սալի է, բայց յեղափոխականին
գնդակը չիփշիտակ սրտերնուս կը
բանի:

ՈՒՍԱՃՈՒՔԻ ԱՐՈՒԵՍԱՅԱՆԴԵՍԸ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱՅԱՆԴԵՍԸ

Այսօր կը փակուի քաղաքիս ար-
ուեստահանդէսը շուրջ 20 օր գո-
յութիւն ունենալէ վերջ: Արուես-
տահանդէսի յատկացուած չէնքն է
երկարականի երկու վարժարաններ
ընդարձակ բակով մը շրջապատ-
ուած: Վարժարաններու առաջին
չէնքին մէջ կը գտնուէին տեղա-
կան արուեստի արտադրութիւն-
ները, իսկ երկրորդին մէջ օտար
երեղէններ: Շէնքերը գտնուելով

քաղաքի ամենաբարձր կ'պարտա-
յին վրայ, անմիջապէս աչքի կը
զարնէր արուեստահանգէսը իր
գունագեղ դրօշակներով ու զար-
դարանքներով, որոնք ցուցահան-
գէսի փայլը կ'աւելցնէին, և ամեն
օր խուռներում բազմութիւն մը
իրեն կը քաշէին, Եւսօրէն առաջ
9-12 բաց կը արուեստահանգէսը
առանց մուտքի ժողովրդեան հա-
մար, իսկ կէսօրէն ետք 20 ամե-
թիմի տուրք մը վճարել պարտա-
կան էր հոն մտնել ուղղով:

Արուեստահանգէսը չէր ներկա-
յացներ ընդհանուր Պաշտօնի
արուեստաւորաց արտադրութիւն
ները, և արդէն տեղի ընդարձակ
տեղւոյ մը վրայ բացուած չըլլալը
ցոյց կուտար իր մասնաւոր կարի-
ւորութիւնը և կիսապաշտօնական
ցուցադրութիւն մը ըլլալը: Վարի
յարկի երեք թիւ սենեակները
յատկացուած էին սեղաններով, չոր-
ջանակներով, քանդակաւ կարասի-
նով, որոնց մէջ կարեւոր տեղ մը
կը բռնէին հրեայ գործարանի մը
արտադրութիւններն իրենց նորա-
ճաշակ կազմածներով ու շքեղ դը-
սուքներով, որոնք կարող էին մըր-
ցիլ եւրոպական նմանօրինակ գոր-
ծարանի մը արտադրութեան հետ:
Վառնայի հանրամատնութիւնի գոր-
ծարանն ալ փութացած էր իր պէս
պէս մանածներով նմայեցող զետի-
ղել թիւ 1 սենեակին մէջ, և զորմ
նականապէս ցոյց տուլ հասարակ-
ութեան գործարաններու օգուտ-
ները երկրի մը մէջ: Թեղի գոր-
ծարանէն զատ զանազան ըմպելի-
ներու, հոտաւետ նիւթերու և օ-
ճառի գործարաններու արտադրու-
թիւններն ալ ցուցադրուած էին
վերի յարկի թիւ 16 սենեակին մէջ:
Ոսկերչութեան, գեղարուեստի,
և կօշիկներու բաժինները մասնա-
ւոր նորութիւն մը չէին ներկայա-
ցնել թէև, բայց որչափ ցոյց
կուտային այդ ճիւղերուն ալ յա-
ռաջացումը Պաշտօնի մէջ:
Կարեւոր տեղ մը բռնած էին
նաեւ Եւսօրէնի խաղաղորդարանի
կաշիները, որոնք իրենց նրբու-

թեամբ և արհեստի ամեն կատա-
րելագործութեամբ այցելուներու
ուշադրութիւնը իրենց կը գրաւե-
ին:

Երկրպագի շինուածներու մէջ
աչքի կը զարնէին գեղեցիկ դրա-
մակները և Ուրբեանի կողմա-
րարութեան կազմակերպը, զբան
փականքի մասեր, բանալիներ ևն,
որոնք իրենց ճաշակի երբեք չէին
զձազրական կանոնաւորութեամբ
ու փայլունութեամբ կը հաստա-
րէին եւրոպական նոյնանման շին-
ուածքներուն: Կը շնորհաւորենք
այդ հայ արհեստաւորը որ կարող
զայնու է իր արուեստագէտի հո-
ճարով փայլիլ ցուցահանգէսի մէ-
ջ և հայրութեան վարկը բարձրացնել
օտարաց առջև: Եւսօրէնի ցու-
սի եթէ միայն Ոսկերչարանի մը
գործերը տեսած ըլլայինք հոն,
բայց ուրախութիւն է ինձ յայտ-
նել որ ուրիշ արհեստաւորներ տլ
փութացած էին ներկայանալ հոն,
և արուեստահանգէսի փայլը ա-
ւելցնել: Եւսօրէնի մէջ մի անկիւն
գրուած էին ստիւճի խոշոր կը-
տորներ, արտադրութիւն հայ գոր-
ծարանագետի մը, որուն ստիւճի
գործարանը միտնէ ամբողջ Պաշ-
տօնի մէջ: Պ. Տիգրան Միլքի
սեղեկեան Ուստուգիի աշխատա-
սէր և աշխոյժ իրիտասարդ մը,
որ Գերմանիա օճառագործութիւն
մոմագործութիւն և սոսնձագոր-
ծութիւն սովորելով եկած հաստա-
տած է իր գործարանը Ուստուգի
մէջ և կը յուսաւանայ օրէ օր կը
յուսամ թէ իր աշխատութիւնները
պիտի վարձատրուին նաեւ կառա-
վարութեան կողմանէ:

Եւսօրէնի գուրս բակին մէջ մեծ
տեղ մը կը բռնէին երկրագործու-
կան մեքենաները, որոնց շատին
վրայ կը կարգադրէին ֆարութիւն
Մանուկեան անունը, որ ներկա-
յացուցիչէ գերմանական տան մը:
Ժողովրդեան ցուցնելու համար
գործնական փորձեր կրնէր իշեւալ
երիտասարդը, և իր վաճառատան
գործիքներու առաւելութիւնները
ցոյց կուտար ամենուն: մեծ բաղ-
մութիւն մը կը խռնուէր հիւր շո-
քեշարժ մեքենան գործի կը սկսէր:

Պ. Յարութիւն Մանուկեան հա-
մատ ընտանիքի մը զաւակ, մի-
այն իր գործունէութեամբ կարող
զայնու է լաւ անուն մը հանել հը-
րօպարակի վրայ, և օտարներու
վստահութեան արժանանալ: Կը
մալթենք ալ վերագրելու հայ անձ-
նաւորութիւններու օրինակին հե-
տեւ պիտի տարագրենք իր
չափանոյ մը սէջ, որոնք պատիւ
կը բերեն հայ ուղղին և անուն:
Մենք շատ բան սպասելու ի-
րաւունք ունինք մեր Պաշտօնի
բնակ աղագիւցիներէն, և յոյս ու-
նինք թէ ամեն այսպիսի առիթ-
ներէ օգտուելով պիտի աշխատին
իրենց պատկանած աղգին բարե-
նաւորութիւնները հրապարակ հա-
նել, և ցոյց տալ հայի հոճարը:
Գարձենք յարատեւ և պիտի տեսնենք
օգուտի պատեհ առիթներէ:

Մ. ԳԵՐՈՒՆԻ
22 Օգոստոս, Ռուստուգ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ՝Ը

(Շարունակութիւն Լախոյի թիւին)

Այսու հանգեւծ ծիար Պոնտուքեան
պիտի ներէ ինձ անշուշտ իմէ՛՛ ճանչ-
նալէ վերջ իր ընթերցարանին բազմա-
թիւ առաւելութիւնները, քանի մը
աննշան դիտողութիւններ ընեմ, ու-
րոնցմէ կարելի ըլլայ թերեւս օգուտի
զատարարութիւն մը առնել:

Կը կարծեմ որ լաւագոյն պիտի ըլ-
լար աւելի ընդլայնել ու մանրամասնել
ուսուցման եղանակի բացառութեան
Բ. կէտը, նկատելով որ մեր նախա-
կիթարաններու մէջ առկային կը պըտ-
նուին այնպիսի ուսուցիչներ, որոնք
ապահովաբար, բան մը չեն կարող
հաշիւալ աշխատողներ, այնպէս ինչպէս
բացատրուած է ան: Միւս կողմանէ
աւելորդ կը նկատուի իրադրական
ծանօթութեանց վերաբերեալ զանազան
հարցումներ սա պարզ պատճառաւ: որ
քիչ շատ կարող ուսուցիչ մը անոնց
բնաւ պէտք չունի և ինքնաբերաբար
կրնայ աշակերտին ուղղել իր յարմար
դասած հարցումները եւ այսպէս առաջ-
նորդել, անոր՝ աստիճանաբար իրա-
ցնելու համար նորանոր ծանօթութիւն
ներ, միշտ կրկնելով եւ վերջիվերջով
նախորդները: Իսկ բաւականաչափ
զարգացած չունեցող ուսուցիչ մը, ա-
ւելորդ է ըսել, երբեք չպիտի կրնար
այդ հարցումները օգտակարապէս գոր-

ծածել, և հետեւաբար ձեռք բերել
յուսացուած արդիւնքը: Կարելի էր
սակայն յարմարագոյն հաստատել մը
ներքեւ գնել տիպար հարցարան մը
գործնական դաս մը՝ առաւել ըլլալու
համար այս կարգի ուսուցիչներէն ա-
նոնց՝ որոնք զանազան թիւսն նոր և
զանազան հետեւելու եւ զանոնք
իւրացնելու բարի կամեցողութիւնը
ունին:

Պիտի փափաքէի նաեւ որ ճայնաւոր
գիրքը բազմապիսեան սրտիւր վար-
ժութիւնը սկսուէր առաջին դասէն,
քանի որ սղան առաջին օրէն կը ըս-
կիս տառերուն ճայնեցը եւ ձեւերը
սովորելու հետեւաբար վանկեր արտա-
սանել:

Ամենուս համար յայտնի իրողութիւն
մըն է թէ պատկերները որքան կը
չափաւորուին՝ նոր աղբիւրները: Անշու-
պատկեր մը յաճախ ժամերով ուսում
նասիրութեան առարկայ կը ըլլայ անոնց
մէջ, զանազան մեկնութիւններ կը
տրուին իրենց աչքերուն առջև պատ-
կերացող առարկաներու կամ պորտոգո-
թեանց վրայ: Եւսօրէնը իրենցմէ մի
չափելին խորքէն կը հանէ խնամով
ձայլուած պատկեր պատկեր մը գոր կը
բաղդատին միւսին հետ, և ահա կը
սկսին գնահատումները, վիճաբանու-
թիւնները, որոնք ուսուցման աջանշ-
ի առիթներ են պարտաճանաչ ուսու-
ցիչի մը համար: Այս տեսակետով ներ-
ուր ինձ ըսել թէ շատ զգալի է պատ-
կերներու բացառական պակասը գրքի
վերջին մասին մէջ:

Մինչև ցարդ սովորական էր տես-
նել 100 կամ աւել էջերէ բաղկացած
ընթերցարաններ: Իրաւ է որ ծիար
Պոնտուքեանի դասագիրքը ասոնց վրայ
մեծ առաւելութիւն մը ունի իր 64 է-
ջերով, բայց եւ կը փափաքէի որ ալ
աւելի համառօտ ըլլար ահ, նկատելով
որ ոչ մի սեղ կարելի է առաջին տար-
ուան մէջ սովորողներն աղբիւն աւան-
դել համեմատաբար բազմաթիւ էջեր
բաղկացած ընթերցարանի մը պարու-
նակութիւնը, եթէ մեր դասերուն մէջ
գնել ու գինք պահանջուած խնամքն ու
բազմակողմանի ծանօթութիւնները ու-
րոնք նախատեսուած են ուրիշ իսկ զըր-
բին «Ուսուցման եղանակներ» մէջ:

Այս աննշան դիտողութիւններս եր-
բեք չեն կրնար նուազեցնել «Նոր Ըն-
թերցարան»ին աչքի զարնող առաւե-
լութիւնները, որոնք զայն արտասա-
նանի համար յարմարագոյն զատարար
կընեն: Այս ճշմարտութիւնը ըմբռնել
վերջ՝ եթէ աչքի առջև ունենանք այն
զոհողութիւնը՝ զոր բրած է Տ. Պոն-
տուքեան համարձակելով այսպիսի աշ-

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (38)

ԺԱՄԱՆԱԿԱԿԵ ՅԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

— Խ. Խ. —

ՄԱՍՆ Բ.

Պատարագը նոր սկսած էր եւ վա-
ղամեակի Սրբանձառանցը նոր սկսած
էր իր ժողովրդական արարմանի քարո-
զը երբ մեր երեք հայ երիտասարդնե-
րը հասան Եկեղեցիի բակը, հոն քիչ
մը հանգստացան եւ խառնուեցան ժո-
ղովրդեան մէջ: Քիչերէն մօտ երկու
հարիւր քանիւ հինգ յայտարարութիւն
աւելցած էր, առկէ հարիւրէ աւելի
ցրտեցին մատուռին մէջ և Եկեղեցիի
աւարտելէն ետք խոյն դուրս գալով
հիւանդանոցի նոր և անկատար չէն-
քին մէջ՝ զոր Եկեղեցիի աւարտէն ետք
ժողովուրդը այցելելու սովորութիւնը
եւ հետաքրքրութիւնը ունէր, մնացած
հարիւր յայտարարութիւնները սփռեցին
իւրաքանչիւր սենեակի մէջ մէկէ ա-
ւելի օրինակներ, այնպէս որ երբ հա-

տարակութիւնը իր խմբական այցելու-
թիւնը սկսաւ, չորս կողմը կարմիր
թուղթեր գտաւ ու հայտնութեան բո-
ղոքը ահաւոր թափով պատկերացած կը
երեւար:

Ըստ մեզ, այդ տեսակ կարմիր յայ-
տարարութիւններով ժողովրդին յեղա-
փոխական առաքելի կոչելու գրութիւ-
նը վառ եղանակ չէր, միայն, թէ ձեռ-
քով պատրաստելու եղանակը բաւական
վառագուր կրնար ըլլալ Մանուկեան-
վի անդամներուն համար, չնայելով որ
յայտարարութիւնները պարզ աղագիւ-
ծեով գրուած ու կեղծուած էին, այդ
պակասը դարձանելու համար պէտք է-
շած զիւրութիւնները կային: — Կամ
արտասահմանի մէջ աղագիւցի աղ և
կամ, հէքթօկրաֆով մեծ ուշադրու-
թեամբ յաջող կեղծուած ձեռագրով
յայտարարութիւններ պատրաստել Պո-
նի մէջ: Մանուկեանցի մինչ 1890
թուականը առ այդ միջոց մը չիտրե-
ցաւ, այնպէս որ իր յարմար դատած
եղանակով գիշերները լաւացնել պէտք
կըլլար քանի մը հարիւր օրինակ յե-

ղափոխական կոչ պատրաստելու հա-
մար:

Մայիսի 7ին ցրուած հարիւրուոր
յայտարարութիւններէն հանդէսը դի-
տելու համար եկող օտարագործի և հայ
յրտեաններու ձեռքն ալ օրինակներ
անցան: Աղագիւցեան բարեկամ եւ ճշ-
մարտապէս սրտացաւ հայ զայն կար-
գալէ հետ, ահ թուականներն կամ կը
պատռէր և կամ եթէ չուտ փափակ-
նկատ չէր, ինք կարգաւէ ետք ուրիշ
մը կուտար: Այն օրը այն սեղ զըս-
նուած յրտեաններուն մէջ կային երկու
հայ դաւաճաններ ալ Պէշիթաշէն: Ա-
ւախն և Յակոբ անուանով:

Վահրամ պատահամար անոնց քով
էր եւ առանց անոնց ներկայութեան ու-
շադրութիւնը դարձուցած ըլլալու, հե-
տեւ եւ խօսակցութիւնը անկանջին դար
կաւ:

«Յակոբ գրաւ կը գնեմ որ ձեռքս
զանուած յայտարարութեան գիրք որ-
քան ալ կեղծուած ըլլայ, մեր պեղացի
Լեւոն Պողոսեանինն է. ճիշդ առիթն է,
կը յուսամ որ հոն է, եթէ հանդիպիմ

խաղոյն ձեռքաւարել պիտի տամ զինքը
և կառավարութեան ըրած ժառանգ-
ութեան փոխարէն հաւաքը ունիմ որ
զոհացուցի վարձատրութիւն մը պիտի
ստանամ:

— Սարգիս չըլլաւ վրայ բերաւ խո-
սակցիցը:

— Քեզի ճանչնալուս չափ այդ մա-
սին վստահ եմ, պաշտօնականեց Աւե-
սիս:

— Կարծեմ կը խաբուիս, կրկնեց Յա-
կոբը, կարծուկ երիտասարդ մը որ
հասակը հազիւ հարիւր քանի տարեկա-
նէր կար եւ որ իր դաճածութիւնը
ամփոքելու համար սրածայր կրտսերնե-
րու վրայ կը թառէր գլխուն վրայ կը-
րիւղ քսաներկու սանթիմէթ բար-
ձրութեամբ կարմիր ֆէս մը:

— Զեմ կարծեմ, չնշտեց Աւեսիս:

— Եւ վերջնականապէս չեմ կրնամ
պնդիլ որ անիկայ եղած չըլլայ: միայն
թէ որքան ալ մենք կ'առաւարտութեան
վարձկաններ ըլլանք, բոլորովին ալ
անխղճատար չըլլանք, սղան պեղացի-
նիս եւ իմ ալ պարզական ընկերս ե-

խառնութեան մը ձեռնարկել՝ իր յոյսը
դնելով միմիայն արտասահմանի մէջ
գտնուած զարոգանքներուն վրայ, այն ա-
տեն դիւրաւ պիտի գտնուէր պարտակա-
նութիւնը որ կը ծանրանայ ամենուս
վրայ՝ չուտով սպառելու ձեռք ընթեր-
ցարանի ա. տարին, որպէսզի հեղինա-
կը քաջաբերուած՝ առիթն ունենայ
չուտով պատրաստելու նաեւ անոր միւս
տարիները, ինչ որ բացարձակապէս
կախուած ունի դասագրքին ա. տար-
նաւն գտնելիք ընդունելութենէն:

ԿՐՕՆ ՄԻՔՍՅԷԼԵՍՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԿՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՊԵՆԻՍՏԱՆ

(Շարունակութիւն նախընթաց թիւին)
Մեր նոր գտած ջորիներով ե-
րեք օր ալ ճանապարհորդելէ վերջ,
ճամբայ կլինելու տասներորդ օրը
հասանք Սոմալ ըսուած տեղը.
զիչերուն ժամը երկուքն է. կը
լսենք շունչերու, մարդերու ձայ-
ներ ու բաղաձայն կը մտնենք. վը-
թութեան մէջ բան մը չեմ տես-
ներ, տան նմանութիւն ունեցող
բան մը չկայ. վերջապէս տեղ մը
կը գտնենք, կը պառկենք եւ կը
լուսցնենք այդ գիշերը. առաւօտ
կըլլայ եւ ինչ կը տեսնեմ... քա-
ղաք ըսուածը չորս հինգ հարիւր
խրճիթէ բաղկացեալ գիւղ մըն է.
ամենքն ալ եղէգէ, բնակիչները
ամենքն ալ մերկ են, միայն ա-
ռաջին կտոր մը կաշի կամ կտաւ
կախած են, կրկնը թեւերին կը
կրեն ոսկի ապարանքներ (օզակ)
եւ վզերին ալ գոյնզգոյն ուլունք-
ներով վարդարած են: Մահան կը
մնայ հոս, միւս առաջնորդս հա-
պէ ըլլալով շատ չաւ արարէն
կը խօսի. այս գիշեր լեռներու
մէջ պիտի անցնենք, կ'ըսէ, զգու-
շութիւն ընելու է որ ուտելիք-
ները չը գողնան, ես կը վարմա-
նամ. եւ կըսեմ թէ—«Հապա գութ
ինձ ըսած էիք թէ այս տեղի մար-
դիկը գողութիւն չեն ըներ:»
—Ինչ մը կեցիր, կը պատասխա-
նէ, եւ գողերը պիտի տեսնես: Բա-
ւական յառաջանալէն վերջ, «ահա
գողերը կուգան» կըսէ առաջնորդս:

Իր ցոյց տուած կողմը կը նայիմ
եւ կապիկներու խումբ մը կը տես-
նեմ, որ մեր մօտէն կանցնէին:
Այդ ժամանակ հասկցայ որ ու-
տելիքի գողերը ատենք են: Ինչ-
ւանցանք գիշերը ահալի լեռնե-
րու մէջ. բոլորը ծառերով պա-
տած, ամեն կողմէ ջուրի կը
բղկին, եւ սարսափելի անձրեւ
կուգայ, Առաջնորդս կըսէ որ աս-
կէ մինչեւ ֆոնկայ որ 25-30 ա-
ւուր ճանապարհ է, այսպէս լեռնե-
րով, ձորերով եւ ծառերով պա-
տած. վերջապէս երեք օր ալ այս
անտառուտ երկրէն ճանապարհոր-
դելով կը հասնինք «Հարար» ը-
սուած երկրի Հարար քաղաքը:
որ բուն Ալիսինիոյ սահմանից
երկիր մըն է: Քաղաքը պարսպա-
պատ է եւ 2000 տունէ կը բաղ-
կանայ. տուն ըսուածները, միա-
յարկ, տաճիւ, խեղճ ու կրակ բա-
նիւր են. այս տեղի ժողովուրդն
ալ մերկ է. ուտելիքին տեսակ
մը կորեկ է, զոր կը ծեծեն, եւ
քարի վրայ եփելով կամ խաշելով
կուտեն: կը մշակեն սուրճ, կո-
րեկ, պղպիղ եւ ուրիշ ասոնց նը-
ման բոյսեր. կորսան փիղ ոսկրին
համար, եւ ուրիշ շատ մը մշկա-
հոտ կամ գեղեցիկ մօրթ ունեցող
կենդանիներ ու ատով կապրին:
Ես իջեալանցայ հոտ հաստառ-
ուող մեր զինավաճառ բարեկամին
տունը, որ շատ սիրալիւր ընդունե-
լութիւն մը ըրաւ եւ աշխատեցու-
ճանապարհի յոգնութիւններս եւ
կրածներս մոռցնել տուաւ. պատ-
մեց իր արկածները եւ այժմու ու-
նեցած գիւրքը, հայրենի երկրէն
այնքան հեռու այդ բոլորովն ան-
ժանօթ երկրին մէջ, որ ինձ մեռե-
լութիւն կազդէր, մեռելութիւն,
աննպատակ եւ վտանգալից կեանք
մը եթէ մարդ միւսներու ալ վա-
տկէր: Յուսաբեկ եւ վտահար բայց
առերես ուրախութիւն կիզելով
մտիկ կընեմ իրեն եւ մեր ծննդա-
վայրի մօտին տրուած բազմապէս
հարցումներուն կը պատասխանեմ,
ու կը շնորհակալ իր հետաքրքրու-
թիւնը:

(Շարունակելի)

—)o(—

ԱՂՋԿԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ
ԳԻՇԵՐՈՒԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Աղջկանց կրթարանն իր Դու-
տարւոյ շրջանը կը սկսի յառաջի-
կայ Սեպտ 1/13ին, Սոյն կըր-
թարանն որ երեք տարիներէ ի վեր
անընդհատ իր ընթացքը կը շա-
րունակէ, աւելորդ կը նկատուի
իր կրթական եւ ուսումնական ծը-
րագրին վրայ խօսիլ:

Վարժարանը բարձրագոյն նա-
խակրթարանի մը ամեն պահան-
ջուած պայմաններն ունի, դասերը
կառնդուին մեծ խնամքով: Լե-
ռներու մասին՝ ունի Հայերէն ֆ-
րանսերէն, Պոլկարիէն որոնք պար-
տաւորիչ են, իսկ Անգլիերէնը
կամաւոր:

Ընդունելութիւնը եւ մասնաւոր
տեսակցութիւնը կը կատարուին
ամեն օր եւրոպական ժամը 9-12:

Վառնա Կրթ. թաղ թիւ 40:

Տնօրէնութիւն

Պ. ՃԻՅԵՐՃԵԱՆ

ԼՐԱՔԱՂ

○•○

Քղիի Դարման գիւղին մէջ
Քիւրտերուն կատարած մէկ նոր
կղերականգործութեան մանրամաս-
նութիւնը կը կարգաւորէ Նոր Կեան-
քի մէջ. ըստ որում Համիտիէի հե-
ծելագործէն 30 քիւրտեր իրենց
հետ ունենալով 12 ջորի, Դարման
գիւղը կը կոխեն եւ Սարգիսեան
Մարտիրոս աղայի տունը մտնելով
անոր բոլոր հարստութիւնը կո-
ղոպելէ վերջ, Մարտիրոսն ալ կը
խողխողեն ու կը հեռանան:

—Նոյն թիւթիւն Կ. Պոլիսէն կը
իմացնեն թէ Ուզուն Դեօփրիւի
գաւառակին մէջ (Սեբաստիոյ նա-
հանգ) պաշտպանութիւնը կըսպառ-
նան քրիստոնէից վրայ յարձակում
գործել: Նաեւ կիմացնեն թէ Կով-
կասէն հայրենիք վերադարձող հայ
գաղթականներէն Սապուրճանի մէջ
(Պայազիտ) 500 հոգի ջարդուած
են թուրք զինուորներէ:

տեղով մասնաւորաբար գաճաճ լրտեսին
Լեւոնի մասին ցոյց տուած պաշտպա-
նութիւնը:

Լեւոն առանց իրեն սպառնացող վը-
տանգէն անաբեկելու, Յակոբի խօսքերը
եւ իր մասին ըրած պաշտպանութիւնը
իմանալով ժպտեցաւ: Վահրամի ստիպ-
մամբ ըսաւ անոր թէ ինչպէս յաջողած
էր գանձիկայ փրկել, յայտնապէս ինք-
զինքը վտանգի ենթարկելով:

«Ձերբակալուելու վախ չկայ. առանց
ոեւ է երկրպի կրնանք հոս կենալ.
գաճաճ իրիկունը իր տեղեկագիրը պի-
տի ներկայացնէ ինձի:

—Ձգէ՛ ձերբակալելու վախը, ամիս
մը առաջ Յակոբի վերաբերմամբ այդ
աստիճան գաղափարական ճշդութեամբ
եւ համարձակութեամբ շարժելով շատ
գնահատելի ծառայութիւն մը մատու-
ցած ես աղքատին դատին: Խօսեցաւ
Վահրամ, —յեղափոխական ըլլալ, աղ-
գին անտարբեր եւ միասակար դասա-
կարգին համար մահաւանդ բժիշկ ըլ-
լալ կը նշանակէ. անուղղանքը ուղ-
ղելու համար յեղափոխական վարիչ-

—Մոսկուէն լ'Ամէնի կը գը-
րեն թէ՛ եղբարք Ժամհարօֆ հայ
դրամատուներ, որ վերջերս տասը
հազար ռուբլի զրկած էր Պատրի-
արքարան ինչպստ որբերուն, իր
հաստատման 25 ամեակը տօնեց եւ
այս առթիւ աշխարհի ամեն կողմ
գտնուող հայեր փութացին հեռա-
գիրներով ու բազմաթիւ նամակ-
ներով շնորհաւորել այդ բարերար
եղբայրները:

—Դարե՛ժի մէջ հայ կանանց
հաստատած Բարեգործական Ըն-
կերութիւնը հետզհետէ իր օգնու-
թիւնները կը բազմապատկէ եւ
նոյն իսկ աղքատ հայ հողագործ-
ներուն մշակութեան համար սեր-
մնացու, եզ եւ այլ անհրաժեշտ
պիտոյքներ կը բաշխէ: Սոյն Ըն-
կերութիւնը կը ջանայ կեդրոնա-
կան վարժարան մըն ալ հաստա-
տել Դարե՛ժի կամ ուրիշ յարմար
բաղաւթի մը մէջ:

—Օտեսայէն նոյն թիւթի կը
գրեն թէ Տ. Խաչատուր կարա-
պետեան Անուշ ուսուսողներուն
30,000 ռուբլ ալիւր նպաստ տը-
ւած է: Ռուսական կառավարու-
թիւնը վակոններ յատկացուցած է
յիշեալին, որ տասը ընկերներ ու
ընկերուհիներ իր հետ առած պի-
տի մեկնի սովատանջ գաւառները
անձամբ բաշխելու իր նպատակը:

—Հոլանտայի մէջ Տ. Մինաս
Չիրազը եւ հայկական խնդիրը
պաշտպանող Տօքթ. Ա. Քիւրէր,
մտադիր է Երեսփոխանական Ժո-
ղովոյ մէջ հարցապնդել թէ կառա-
վարութիւնը ինչո՞ւ չթոյլատրեց
Տ. Մինաս Չիրազի ատենաբանել
Քրիստոնեայ Երիտասարդաց Ըն-
կերութեան արահին մէջ: Մեծա-
նուն տօքթօսին պիտի ձայնակցին
բազմաթիւ Հոլանտացի ազատա-
կան եւ հայասէր երեսփոխաններ:

ՎԱՐԺՈՒՀԻ ԿՈՒՋՈՒԻ

Տօպրիչի աղջկանց վարժարանին հա-
մար կուզուի վարժուէի մը, որ կա-
րգանայ աւանդել հայերէն լեզուի հետ
երկրորդական ուսումներ ու ձեռագործ
գոհացուցիչ ամսականով. փափաքող-
ները գիւնին հոգաբարձութեան նամա-
կով: 1—3

ները ո' եւ է ջանք պէտք չէ որ խնա-
յին. Յակոբները պէտք է որ անհրա-
ժեշտաբար փրկուին. բաւական չէ մի-
այն դաւաճաններու գլխին անէծք
կարգալ եւ երկնքի շանթերը հրաւի-
րել, պէտք է աշխատիլ անոնց հոգին
ազատելու: Իցի՛ւ թէ սա ճշմարտու-
թիւնը ըմբռնած ըլլային մեր շատ մը
յեղափոխականները:»

Շ. Կումսարական

(Շարունակելի)

ղած է չըլլայ որ դատապարտելի փութ
կտուութեամբ մը զինքը անակնկալ
փորձանքի մը մասնէնք. գիտես որ
մինակ մայր մը ունի. ետքը բարեպաշտ
պառաւին վախճանը ինչ կըլլայ:

—Յակոբ, սա վերջին օրերը քեզի
սրչափ փափկանկատ կը տեսնեմ. այդ
տեսակ նկատումներով սողորուսողները
ինչ գործ ունին աս ասպարէզին մէջ,
որ քարստութիւն չը պահանջէ քիչ
մը:»

Ահաւասիկ լրտեսութեան ոգին ներ-
կայացնող միեւնոյն ցեխի մէջ չարի-
տած երկու տղայեր. մին անխղճա-
նար, բառին կատարեալ իմաստով, միւ-
սը ըստ երեւոյթին զէթ ան ատենին
համար աւելի պայմանական լրտես մը,
փրկուած մը:

Լեւոն Պողոսեան, տեսնէ որ ը-
սենք, անոր փրկութեան դործին մէջ
շատ զնահատելի դեր մը կատարած էր:
Օր մը, մայիս 27էն ամիս մը առաջ,
Յակոբի հետ Մօլլա-Այազմասի առանձ-
նացաւ. հոն իր կատարած սեւ գերը
անոր երեսին տուաւ եւ զայն մեղայի

բերաւ: Յակոբ Լեւոնի փրկարար խօս-
քերէն ցնցուած, խոտացաւ թոթուել
դաւաճանի զաղրելի վերաբերուի եւ
խօստումին ալ հաւատարիմ մնաց քա-
նի որ ատեն մը ետքը իր առջի ար-
հեստագործ վիճակին զինելով, կօշկա-
կարութեամբ պարզեցաւ եւ օրը օրին
պարկեշտ չափով ապրելով բաւականա-
ցաւ:

«Ես իր ձեռագիրը գտնելու պիտի
ջանամ, եթէ՛ այդ յայտարարութեան
հետ բաղդատելով յայտնի նմանութիւն
մը նկատենք, ա'ն ատեն միայն ձեռ-
բակելու տանք զինքը, առաջարկեց
Յակոբ: Կը կրկնեմ ինչ որ զիս խղ-
ճահար կընէ անոր յանկարծակի ձեռ-
բակելութեան մէջ, անոր վաթսուե-
ամիսայ ձերունի մայրն է:

Աւետիս համակերպիչաւ: Վահրամ
աս խօսակցութիւնը ծառին տակ կե-
ցած ամբողջութեամբ մտիկ ըրաւ: Եր-
կու լրտեսները յառաջանալու սկսան.
Վահրամ առանց ատեն կորսնցնելու
Պողոսեանը գտաւ, եւ եղկութիւնը ա-
նոր մանրամասնաբար պատմեց, չեչ-

— 110 —

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войнико